# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

27 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆ

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արթուր Գրիգորյանը, Արեվիկ Ստեփանյանը, Արարատ Թումանյանը, Արմեն Հայրապետյանը, Մարուսյա Հովհաննիսյանը, Արտուշ Մաթեվոսյանը, Շահեն Մինասյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին Մեղրի համայնքի ղեկավարի խորհրդականը, Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր, աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը:

Նիստը արձանագրում էր Աննա Նավասարդյանը:

ԼՍԵՑ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ - 1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի 2025 թվականի մարտի 27-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Գույքի նվիրաբերությունն ընդունելու մասին:

**Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է (Որոշում N 42-Ա)**

<u>ԼՍԵՑ</u> - ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Զեկ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 13-ի N294-Ա որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

<u>ՈՐՈՇԵՑ</u> - 1.Ընդունել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացված, պետական սեփականություն հանդիսացող, Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, գյուղ Շվանիձոր, 1-ին փողոց, 18/3 ամբուլատորիա հասցեում գտնվող 163.8 քառ. մետր մակերեսով ամբուլատորիայի շենքի, ինչպես նաև դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 0.0125 և 0.0092 հա մակերեսներով հողամասերի, սեփականատիրոջ բաժինը 0.0125 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի բաժնային սեփականությունում կազմում է 1638/14277 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 25042024-09-0043, շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք՝ 3 969 374.55 դրամ) նվիրաբերությունը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքին՝ որպես նախադպրոցական ուսումնական հաստատություն շահագործելու նպատակով:

2.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0**

**Որոշումն ընդունված է (Որոշում N 43-Ա)**

Ավագանու անդամներ

ԱՆԱՀԻՏ ԱՂԱՄԱԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱԳՐԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ա. Նավասարդյանը